600.0225.13.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2018 թվականի №225Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի №298Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի մայիսի 29-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 9-ի «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Այրք ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №298Ա՝

   1) որոշման մեջ «Ներքին Շորժա համայնքում՝ Այրք գետի ոռոգման ջրատարի վրա» բառերը փոխարինել «Վարդենիս և Ակունք համայնքների վարչական տարածքներում՝ Մասրիկ գետի Այրք վտակի վրա (բնական ջրահոսք)» բառերով,

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Այրք ՓՀԷԿ-1» փոքր

հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերությանն ազատել 2017 թվականի ապրիլի 10-ի №1602/08 գրությամբ ներկայացված, այնուհետև 2018 թվականի հունվարի 24-ի №300/08 գրությամբ երկարաձգված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած հինգ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2018 թվականի մայիսի 30-ի №O.AB.100.11CB.ESC.2.2650.18 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած մեկ հարյուր քառասունհինգ հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 14-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
13 հունիսի 2018թ.